11.10.2022
350-67

Հայաստանի ազգային արխիվի տնօրեն
Գրիգոր Արշակյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Արշակյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Երբ է գործարկվել Հայաստանի ազգային արխիվի պաշտոնական կայքը և ի՞նչ ֆինանսական միջոցներով (դոնոր կազմակերպության աջակցություն, պետական բյուջե, նվիրատվություն և այլն)։
2. Քանի՞ փաստաթուղթ է պահվում Հայաստանի ազգային արխիվում, որոնք թվագրվում են 1970թ. և նախորդող ժամանակահատվածին։
3. Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերի քանի՞ տոկոսն է թվայնացված։
4. Ի՞նչ միջոցներով է իրականացվել թվայանցման գործընթացը (դոնոր կազմակերպության աջակցություն, պետական բյուջե, նվիրատվություն և այլն)։
5. Հայաստանի ազգային արխիվն ունի՞ պահվող փաստաթղթերի կատալոգ և արդյո՞ք այն հասանելի է համացանցում։ Խնդրում ենք տրամադրել հղում։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում։

Ուշադրություն։ Խնդրում ենք հարցմանը ***պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով։***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան